

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց,
որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Մարկոս 10.14:

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ
Կիրականօրեայ Դպրոցի Ամսաթերթ

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

<https://www.sourphagop.org/period/vol30special.pdf>



Լ տարի (30-ամեակ)
2023-ի Տարեկան Բացառիկ

Բովանդակություն

Խօսք՝ Հովհի եւ Հոգաբարձութեան	3
Մեր Խօսքը	4
Շնորհակալական նամակ ՀՕՄ-էն	5
https://www.facebook.com/sourphagop.org	6
Հակիրճ տեղեկություններ 2022-23 տարեշրջանի մասին	7
Աշակերտական ներկայութեան տախտակներ	9
Ձեռնարկներ եւ արտադասարանային աշխատանքներ՝ Ժամանակագրական շարքով	10
“Սուրբ Պատարագ” Գիրքի ներկայացում	11
2023 Ս. Զատիկուան ճրագալոյցի պատշաճեցուած ընթերցումներ մատուցմամբ մեր աշակերտներուն	12
Ամփոփում 2022-23 (43-րդ) տարեշրջանին	14
2022-23 տարեշրջանի կազմը	44

ՎԵՐԱՄՈՒՏ
17 Մեպտ. 2023
 Ժամը 10:30



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋ. ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՑԻ

Église Arménienne Sourp Hagop Armenian Church

Երեքշաբթի, 9 Մայիս 2023
Մոնթրեալ

**Յարգելի տնօրենություն եւ ուսուչական կազմ,
սիրելի աշակերտ-աշակերտուհիներ,
Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի,
աստ,**

Միջին աշակերտ-աշակերտուհիներ,

2022-2023 տարեշրջանը աւարտեցիք ուրախութեամբ, որովհետեւ աւելի անցաք հոգեւոր սնունդով: Ս. Գիրք կարդացիք եւ սերտեցիք, աղօթքներ սորվեցաք եւ աղօթեցիք, Հայ եկեղեցւոյ աւանդութիւններով Քրիստոսի Հոգիին հաղորդակիցներ եղաք:

Միշտ պէտք է սորվիք: Միշտ պէտք է անիլ գիտութեամբ եւ իմաստութեամբ: Մինչ գիտութիւնը անձնական ճիգի կը կարօտի, իմաստութիւնը՝ Աստուծոյ Խօսքին, եւ Աստուծոյ Խօսքին նուիրուած մեր աւանդութիւններուն՝ ինքզինք ունկնդիր դարձնելու: Վստահաբար, ամբան պիտի չմոռնաք ձեր սորվածները, նոյնիսկ՝ ժամանակ պիտի տրամադրէք ու աւելին սորվիք:

Յարգելի տնօրենություն եւ ուսուչական կազմ,

Ինչպէս նախորդ տարեշրջաններուն, նաեւ անցնող տարեշրջանին՝ անխառն ոգիով մշակեցիք մեր մանուկներուն, պատանիներուն եւ պարմաններուն հոգիները: Հոգեկերտ կրթական մշակներ էք դուք, եւ մեր համայնքին համար՝ էական կոչում մը կ'իրագործէք:

Այս համայնքը, որուն մեկնակէտային ժողովը 1958-ի 18 Յուլիսին գումարուած է, եւ որուն 65-ամեակը պիտի տօնենք այս տարեվերջին, արի քայլերով յառաջացած է մինչեւ այս օրը. յառաջացած է թէ՛ իտէլապաշտութեամբ, եւ թէ՛ հոգեւոր տեսականով: Հոգեւոր տեսականին իրականացման մէջ՝ մեր Կիրակնօրեան 1980-էն առկին մեծ ներդրում ունի: Կը մաղթենք, որ ձեր ներդրումը միշտ պտղաբեր ըլլայ: Ձեր առաքելութիւնը՝ եկեղեցակերտիչ առաքելութիւն է: Ձեր վարձքը կատար:

Բարի արձակուրդ եւ վերադարձ՝

Հովիւ եւ Հոգաբարձություն

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ

3401 Olivar-Asselin, Montreal, Qc H4J 1L5 ☎ 514 331 5445 Email: eglise@sourphagop.net

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ 33 Կիրակիներ:

Այս տարի նաեւ 30-րդ տարեդարձն էր մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ Սուրբ Յակոբի տօնին՝ Դեկտեմբեր 2022-ին մեր կայքէջին՝ www.sourphagop.org-ին 22-րդ տարեդարձն էր:

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»: Յիսուս Քրիստոսի արտասանած խօսքը, որ Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն է, կը մնայ հիմը մեր եկեղեցւոյ պայծառութեան: Այն եկեղեցիները, որոնց մանուկները արգելքներ ունին Յիսուսին երթալու, դատապարտուած են պարպուելու: Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին. մանաւանդ Գանատայի մէջ երբ պետութեան կողմէ վարժարաններու մէջ, ընդհանրապէս կրօնական դաստիարակութեան սահմանափակումով, եկեղեցիներուն համար կենսական կը դառնայ Հայ Քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցել նոր սերունդին Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցով:

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»: Ասկէ 94 տարիներ առաջ, Կիլիկիոյ Սահակ Բ. Խաչայեան Կաթողիկոս իր իմաստութեամբ, որպէս նշանաբան ունենալով Յիսուսի այս խօսքը, մէկ նախադասութեամբ կ'աղերսէր հայ մայրերուն որ իրենց զաւակները Քրիստոսի մօտեցնեն: Ան Քրիստոսի խօսքով կը սաստեր բոլոր անոնք որոնք տարբեր ձեւերով արգելք կը հանդիսանային որ հայ ազգին մանուկները մօտենան Քրիստոսի:

Այս տարուան ընթացքին, բաղդատած նախորդ տարուան, մեր արձանագրուող աշակերտներուն թիւը 100-էն 107-ի բարձրացաւ եւ իւրաքանչիւր Կիրակի օրուան միջին ներկայութիւնն ալ 52-էն 54-ի: Այս տարուան ընթացքին, ուրախ ենք յայտարարելու, թէ Մանկապարտէզի եւ Նախակրթարանի աշակերտներու աճ արձանագրեցինք, սակայն երկրորդականի աշակերտներուն թիւը նուազեցաւ, հիմնականօրէն որովհետեւ Երկր. Դ. , Ե. եւ CEGEP-ի տարիքներու աշակերտները շաբաթավերջերուն մասնաժամ վճարովի գործեր ունին:

Աստուծոյ կամքով մեր 44-րդ տարեշրջանի վերամուտը, ինչպէս ամէն տարի, կը սկսինք Խաչվերացին՝ որ այս տարի Սեպտեմբեր 17, 2023-ին է: Յոյսով ենք որ մեծագոյն թիւով աշակերտներ՝ մանկապարտէզի, նախակրթարանի, եւ երկրորդականի պիտի միանան մեր Կիրակնօրեայ Դպրոցին:

Փառք Աստուծոյ, Պայծառութիւն՝ Հայ եկեղեցւոյ:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական կազմ:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ARMENIAN RELIEF SOCIETY OF CANADA (A.R.S.) Inc.
LA CROIX DE SECOURS ARMÉNIENNE DU CANADA (A.R.S.) Inc.



Նամակ թիվ 113
 2022-2023
 12 Մայիս, 2023

ՄԱՍՆԱՃԻՂԵՐ
 CHAPTERS · CHAPITRES

Գեմպրիձ Մեդրի
 Cambridge Meghri

Համիլթոն Արեւ
 Hamilton Arev

Լավալ Շուշի
 Laval Shoushi

Միսիսսոկա Առազաստ
 Mississauga Arakast

Մոնթրեալ Սոսե
 Montreal Sosse

Օթթաւա Սեւան
 Ottawa Sevan

Սենթ Գաթրինեզ Արազ
 St-Catharines Araz

Թորոնթո Ռոբինա
 Toronto Roubina

Վանկուվեր Արազ
 Vancouver Araz

Ուինսթեր Ռոբինա
 Windsor Roubina

Յարգելի՛
 Ս. Յակոբ Կիրակնօրեայ Վարժարանի
 Տնօրէնութիւն, ուսուցիչներ եւ աշակերտներ

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութիւնը մեծ հաճոյքով ստացաւ ձեր կատարած 450 գանատական տոլարի նուիրատուութիւնը ի նպաստ Հայաստանի եւ Արցախի ՀՕՄ-ի Որբերու Ուսանող Ծրագրին:

Այս նուիրատուութիւնը անգամ մը եւս կուգայ փաստելու ձեր բոլորին ունեցած հաւատքն ու նուիրումը ՀՕՄ-ի սրբազան նպատակներուն եւ Հայրենիքի մեր արիւնակիցներուն օգնութեան հասնելու ճիգին:

Կասկած չունինք, որ ձեր այս օգնութիւնը իր դրական արձագանգը պիտի գտնէ մեր Հայրենիքի ուսանողներուն մօտ:

Շնորհակալութիւն եւ յաջողութիւն ձեր ծրագիրներուն:

Ի դիմաց՝


Լուսին Փալամնեան

Ատենապետ
 Հայ Օգնութեան Միութեան
 Գանատայի Շրջանային Վարչութիւն

3401, Olivar-Asselin, Montréal (Québec) H4J 1L5 • Tél.: (514) 333-1616 • Télécopieur/Fax : (514) 333-1612
 e-mail: ar-s-canada@bellnet.ca • www.ars-canada.ca

<https://www.facebook.com/sourphagop.org>

Մեր կայքէջը համացանցի վրայ իր գոյութեան 23-րդ տարին մտաւ 2022-ի Սուրբ Յակոբի օրը: Տարիներու ընթացքին նորոգեցինք մեր կայքէջին տեսքը ու ճոխացուցինք անոր բովանդակութիւնը: Մեր կայքէջին գրքերու բաժնին մէջ կը գտնէք. Ազգապատում (Ա. Բ. եւ Գ. հատորներ), Ժամագիրք, Սբ. Պատարագ, Կրօնական Գիտելիքներ, Պատարագամատոյց եւ Քրիստոնէայ Հայաստան հատորները, երգեր, շարականներ, «Մաշտոցի Արձագանգ»ի բոլոր թիւերը, եւայլն: Այս տարի կանոնաւորաբար թարմացուցինք մեր FACEBOOK-ի էջ:



https://www.instagram.com/sh_sundayschool/

ՀԱԿԻՐՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ 2022-23 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ եկեղեցւոյ հովանաւորութիւնը:

43-ամեակ Կիրակնօրեայ Դպրոցին

2022-23 տարեշրջանը 43-րդ տարեշրջանն էր: Կիրակնօրեայ Դպրոցը սկսաւ իր գործունէութիւնը Խաչվերացի Կիրակին 14 Սեպտեմբեր 1980-ին եւ յաջորդական 43-րդ տարեշրջանը բոլորեց այս տարի: Այս տարեշրջան սկսաւ Կիրակի 11 Սեպտեմբեր 2022-ին եւ տեւեց մինչեւ Մայիս 21, 2023: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան ամէն Կիրակի օրերը 10:30-13:00: Այս տարի Դպրոցը ունեցաւ Մանկապարտէզի, Նախակրթարանի 3, Երկրորդականի 2 դասարաններ:

30-ամեակ «Մաշտոցի Արձագանգ»-ին

Մեր 2022-23 տարեշրջանի ընթացքին նաեւ՝ 30-րդ տարին ըլլալով, հրատարակեցինք մեր պարբերաթերթ «Մաշտոցի Արձագանգ»ը ամսական դրութեամբ: «Մաշտոցի Արձագանգ»ը կը տպուի եւ PDF ձեւով կը կարդացուի աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ:

22-ամեակ www.sourphagop.org-ին

10 Դեկտեմբեր 2000-ին, Սուրբ Յակոբի տօնին օրը, դպրոցը ունեցաւ իր կայքէջը՝ www.sourphagop.org-ը: Մեր կայքէջը ունի հետեւեալ բաժինները.

Մեր մասին, Սուրբեր, Տօներ, Գիրքեր (ուր կրնաք գտնել մեր դասագրքերը, Ազգապատումը իր 3 հատորներով, Բառարան, Եկեղեցական Բառարան, Սուրբ Պատարագը, Ժամագիրքը, Գրաբար Նոր Կտակարանը եւ Կրօնական Գիտելիքները), Ժամանակացոյց, «Մաշտոցի Արձագանգ» ի բոլոր թիւերը, Հայերէն տառատեսակ, Ճաշու Աւետարան, Տօներ, Պարբերաթերթ, Կապեր, Կարծիքդ, Խաղեր, Զարգացման Մրցում, Church Timeline, Daily Bible:

Ներկայացում՝ «Սուրբ Պատարագ» գիրքին

Շաբաթ, 11 Փետրուար 2023-ին երեկոյեան, Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ ներկայացուեցաւ «Սուրբ Պատարագ» գիրքը: Բացման խօսքը կատարեց պրն. Առէն Պապիկեան: Գիրքը ներկայացուց պրն. Հրակ Պանքեան: Աստուածաշունչէն երկու հատուած ընթերցեց պրն. Առէն Պապիկեան: Ձեռնարկի աւարտին իւրաքանչիւր ներկայի գիրքէն օրինակ մը նուէր տրուեցաւ: Ձեռնարկը կը վայելէր հովանաւորութիւնը Պր. Յակոբ Իսքէնճեանի:

Ս. Զատկուան ճրագալոյցի ընթերցումներ

Կիրակնօրեայ Դպրոցի 2 ուսուցիչներ եւ 9 աշակերտներ Ապրիլ 8-ին եկեղեցւոյ մէջ կատարեցին մարգարեական ընթերցումները:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2022-23 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 107 էր, իսկ շաբաթական ներկայութիւնն էր 54՝ բաժնուած 6 խումբերու:

ԿԱԶՄ

Կիրակնօրեայ Դպրոցի 2022-23 տարեշրջանին ունեցանք 6 տարբեր բաժանումներ հետեւեալ ձեւով.

Խումբ

Բողբոջ, Կոկոն եւ Ծաղիկ

Նախակրթարան Ա. եւ Բ.

Նախակրթարան Գ. եւ Դ.

Նախակրթարան Ե. եւ Զ.

Երկր. Ա. եւ Բ.

Երկրորդական Գ. եւ Դ.

Երկրորդականի Պատասխանատու
Երգերու եւ շարականներու ուսուցում
«Մաշտոցի Արձագանգ»

Կայքէջի պատասխանատու
FACEBOOK-ի եւ INSTAGRAM

Տնօրէն

Դաստիարակ

Շողիկ Թեհինեան,

Աննա-Մարիա Ճամլեան

Սարին Խշիշեան

Յասմիկ Նաճարեան

Թամար Գիզիրեան

Շողիկ Նաճարեան

Հրակ Պանքեան եւ

Ալեքս Տեմիրճեան

Միւր Պանքեան,

Սդեֆան Տեմիրճեան

Առէն Պապիկեան

Սեւակ Պապիկեան

Թորոս Պապիկեան

Առէն Պապիկեան

Հրակ Պանքեան եւ

Թորոս Պապիկեան

Թորոս Պապիկեան

Կազմը գումարեց ժողովներ, որոնց ընթացքին արծարծուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներու վերաբերող եւ այլ նիւթեր:

ԴՊՐՈՑԻ ԱՌՕՐԵԱՆ

2022-23 տարեշրջանին Կիրակնօրեայ Դպրոցի առօրեան ընթացաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցումաձքին համաձայն լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր դասաւանդուեցան Ս. Գրային, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Լսարանային բաժին


Տէրունական աղօթքի, մաղթանքներու եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն ետք, աշակերտները բաժնուեցան իրենց խումբերուն: Պահերը ընթացան հետեւեալ ձեւով.

- Ոսկեղէն համարներու կամ Սաղմոսներու ուսուցում
- Բարոյալից պատմութիւններու ներկայացում
- Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում
- Ճաշու Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն
- «Մաշտոցի Արձագանգ»-ի սերտողութիւն:


Դասարանային բաժին

Դասաւանդուեցաւ ըստ դասագիրքերու:

Աշակերտական Ներկայութեան Տախտակներ



2022-23 տարեշրջանի իւրաքանչիւր դասարանի արձանագրութիւն եւ միջին ներկայութիւն




2022-23 տարեշրջանի իւրաքանչիւր Կիրակի օրուայ Արձանագրութիւն / Ներկայ

ԶԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	
11 Սեպտեմբեր 2022	Տարեսկիզբ եւ վերամուտ
25 Սեպտեմբեր 2022	Վարժարանի աշակերտությունը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդություն ստացաւ
9 Հոկտեմբեր 2022	Թարգմանչաց տօնին յատուկ յայտագիր
18 Դեկտեմբեր 2022	Սուրբ Յակոբի Տօնակատարություն:
8 Յունուար 2023	Ս. Ծննդեան Տօնակատարություն:
11 Փետրուար 2023	Ներկայացում՝ «Սուրբ Պատարագ» Գիրքին
19 Փետրուար 2023	Վարդանանց եւ Բուն Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարություն
Դպրոցը Մեծ Պահքի շրջանին ունեցաւ իր աշակերտական պահքի հետեւեալ ժամանակացոյցը.	
Ա. շաբաթ	Chips
Բ. շաբաթ	Հեռատեսիլ, համակարգիչ, այլ պաստառով խաղեր
Գ. շաբաթ	Տուրմ
Դ. շաբաթ	Կազային խմիչքներ
Ե. շաբաթ	Շաքար
Զ. շաբաթ	Ծամոն
Է. շաբաթ	Հաւկիթ
8 Մարտ 2023	Երկրորդականի խումբ մը աշակերտներ, պատասխանատուին հետ ներկայ եղան հսկումի ժամերգութեան եւ խորհրդածութեան «Հոգեւոր դաստիարակությունը ուղի ինքնաքննութեան» նիւթին:
2 Ապրիլ 2023	Ծաղկազարդ՝ Կիրակնօրեան փակ էր,
8 Ապրիլ 2023	Ս. Զատիկուան Ճրագալոյցի Պատշաճեցում ընթերցումներ Մատուցմամբ մեր աշակերտներուն
9 Ապրիլ 2023	Ս. Զատիկ Կիրակնօրեան փակ էր:
14 Մայիս 2023	Մայրերու տօն, Հանդէսի փորձ:
21 Մայիս 2023	Ամավերջի հանդէս եւ Տարեփակ

Ներկայացում՝ «Սուրբ Պատարագ» Գիրքին

Շաբաթ, 11 Փետրուար 2023-ի երեկոյեան 6.00-7.00, Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ ներկայացուեցաւ «Սուրբ Պատարագ» գիրքը: Ձեռնարկը կազմակերպուած էր եկեղեցւոյ Կիրակնօրեային կողմէ: Բացման խօսքը կատարեց պրն. Առէն Պապիկեան: Գիրքը ներկայացուց պրն. Հրակ Պանքեան: Աստուածաշունչէն երկու հատուած ընթերցեց պրն. Առէն Պապիկեան: Ձեռնարկի աւարտին իրաքանչիւր ներկայի գիրքէն օրինակ մը նուէր տրուեցաւ: Ձեռնարկը կը վայելէր հովանաւորութիւնը Պր. Յակոբ Իսքէնճեանի:



2023 Ս. Զատիկուան Ճրագալոյցի Պատշաճեցուած ընթերցումներ
Մատուցմամբ մեր Աշակերտներուն

ԱԻԱԳ ՇԱԲԱԹ, 8 ԱՊՐԻԼ, ՃՐԱԳԱԼՈՅՑ

Աստուածաշնչական ընթերցումները կատարեցին մեր Կիրակնօրեայ Դպրոցի
աշակերտ/աշակերտուհիներն ու ուսուցիչները:





ԱՄՓՈՓՈՒՄ 2022-23 (43-րդ) ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ



Մանկապարտեզ



Նախակրթարան Ա. և Բ.



Նախակրթարան Գ. եւ Դ.



Նախակրթարան Ե. եւ Զ.



Երկրորդական Ա. և Բ.



Երկրորդական Գ. և Դ.

ՍԵՊՏԵՄԲԵՐ 11-ին տեղի ունեցավ մեր 2022-23 Տարեշրջանի (43-րդ) Վերամուտը: Աշակերտները նախ սերտեցին այս տաղաւար տօնը, իսկ ետքը զանազան ձեռնարկներով նշելու համար Խաչվերացը, խաչեր պատրաստեցին...: Նախքան որ մեկնին, իւրաքանչիւր աշակերտ ստացավ ռեհանի բոյս, ըստ հայկական աւանդութեան: Արձանագրութիւնները շարունակուեցան Սեպտեմբեր 18-ին, եւ Սեպտ. 25-ին: Մեր Գործունէութիւնը, ամէն Կիրակի Ժամը 10:30–1:00: Ներփակկը գտնէք Վերամուտէն նկարներ:

18 -ին Կիրակնօրեայ Դպրոցը արձանագրեց նոր աշակերտներ եւ շարունակեց իր գործունէութիւնը ժամը 10:30-13:00: Աշակերտները, ըստ իրենց դասարանային բաժանումներուն, լսարանային բաժնին մէջ անդրադարձան «Մաշտոցի Արձագանգ»ի Սեպտեմբեր 2022 թիւին մէջ տեղ գտած նիւթերուն եւ սկսան իրենց դասաւանդութիւնը ըստ ծրագրին: Տարբեր դասարաններու նիւթերն էին Ս. Կոյս Մարիամ, Ստեղծագործութիւն, Սբ.

Խաչ, Ասուածաշունչի ներածական: **25** -ին Կիրակնօրեայ Դպրոցը եկեղեցի ուղղուեցաւ, ուր աշակերտները հաղորդութիւն ստացան: Վերադառնալով դպրոց, աշակերտները իրենց դասարաններուն մէջ անդրադարձան Ս. Հաղորդութեան խորհուրդին, ինչպէս նաեւ Սուրբ Գեորգին եւ Վարազայ Ս. Խաչին:







ՀՈԿՏԵՄԲԵՐ 2-

ին Կիրակնօրեայ Դպրոցը շարունակեց իր գործունեությունը ժամը 10:30-13:00: Լսարանային պահերուն ուսուցիչները անդրադարձան Յիսուսի 72 աշակերտներին: Երգեցողության պահուն աշակերտները Ս. Թարգմանչաց երգեր սկսան սորվիլ: Դասարանային պահերուն իւրաքանչիւր դասարան շարունակեց իր

ծրագիրը: **9**-ին նշելու համար **Թարգմանչաց սուրբերուն տօնը**, դասարանները կատարեցին զանազան ձեռնարկներ աշխատանքներ եւ երգեցողության պահուն սորվեցան “Որք զարդարեցին...” շարականը: Այս առիթով, իւրաքանչիւր աշակերտ հայերէն գիրք մը ստացաւ որպէս նուէր: Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները սորվեցան Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց խօսքերը թէ.

«Առանց մեսրոպեան ոճով մարդակերտումի, խախուտ են բոլոր կերտուածքները մեր ազգային կեանքին, ինչպէս խախուտ են աւագահիճն ու հողաշէն կառոյցները աշխարհի...»:

«Հայ Գիրքը միտո՞ւն է մեր ժողովուրդի գաւակներուն համար: Ան, որ Հայ Գիրք կը կարդայ, կը միտոնուի հայութեամբ»: **16**-ին Դասարանները անդրադարձան 4 Ս. Աւետարանիչներուն եւ շարունակեցին Ս. Թարգմանչաց երգեր սորվիլ: Իրենց դասերուն կողքին, Նախ Գ.էն մինչեւ CEGEP դասարաններու աշակերտները նաեւ եկեղեցի գացին եւ ականատես եղան Հայր Յակոբ Եագուպեանի վարդապետական գաւազանի իշխանութեան

տուչութեան: **23**-ին լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան “Գիւտ Խաչի” տօնին, նաեւ ձեռնարկներով: Երգեցողության պահուն շարունակեցին Ս. Թարգմանչաց շարական ու երգեր սորվին: Դասարանային պահերուն շարունակեցին

իրենց դասարանային ծրագիրը: **30**-ին լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան Յովհան Ոսկեբերանին: Երգեցողության պահուն շարունակեցին Ս. Թարգմանչաց շարական ու երգեր սորվին: Դասարանային պահերուն շարունակեցին իրենց դասարանային ծրագիրը եւ ձեռնարկներ կատարեցին:







ՆՈՅԵՄԲԵՐ ամսուան ընթացքին, դասարանային տարեկան ծրագրին կողքին, Կիրակնօրեայ Դպրոցէն ներս յիշատակեցինք հետեւեալ տօները: **6**-ին, Սուրբ Հրեշտակապետեր Գաբրիէլի եւ Մէքայէլի տօն: **13**-ին, Սուրբ Առաքեալներու Անդրեասի եւ Փիլիպպոսի տօն: **20**-ին, Ամենայն Սրբոց (19), Սուրբ Կոյսի Տաճար Ընծայում (21), Բարեկենդան Յիսնակի Պահոց (20): **27**-ին Սրբոցն Նիկողայոսի եւ Գրիգորի Սքանչելագործ Հայրապետացն (26), Սուրբ Կուսանաց Յուլիանէի եւ Վասիլուհիի (28):





ԴԵԿՏԵՄԲԵՐ 4-

ին լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան Սբ. Թադէոս եւ Սբ. Բարթուղիմէոս մեր առաջին լուսաւորիչներուն: Դասարանային պահերը ընթացան ըստ դասագրքերու, եւ մանկապարտեզի, նախակրթարանի եւ երկրորդականի դասարանները ունեցան երաժշտութեան պահ Սբ. Ծննդեան երգեր սորվելով: Աշակերտները նաեւ ստացան «Մաշտոցի

Արձագանգ»ի Դեկտեմբեր 2022-ի թիւը: **11**-ին լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան Ս. Նիկողայոս Զմիւռնոյ Սքանչելագործ հայրապետին եւ Ս. Յակոբի պահոց բարեկենդանին: Դասարանային պահերը ընթացան ըստ դասագրքերու, ու մանկապարտեզի եւ նախակրթարանի դասարանները ունեցան երաժշտութեան

պահ Սբ. Ծննդեան երգեր սորվելով: **18**-ին լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան Ս. Յակոբ Մծբնացի հայրապետին: Այս առիթով Մանկապարտեզի եւ Նախակրթարանի իւրաքանչիւր աշակերտ ստացաւ «Տարօն եւ Տաթեիկ «Աղաւնոյ Վանք» մանկապատանեկան պատմուածքի գրքոյկէն օրինակ մը նուիրուած Գանատայի Ազգային առաջնորդարանին կողմէ (https://armenianprelacy.ca/daron-and-datevig-aghavno...): Դասարանային պահերը ընթացան ըստ դասագրքերու, ու մանկապարտեզի եւ նախակրթարանի դասարանները ունեցան երաժշտութեան պահ Սբ. Ծննդեան երգեր սորվելով: Երկրորդականի աշակերտները ընկերային պահու կողքին պատրաստեցին Ս. Ծննդեան Ճրագալոյցի ընթերցումները:

Ահաւասիկ նկարներ տարբեր դասարաններու տարբեր պահերէ եւ ձեռային աշխատանքներէ:









Շնորհակալություն

ՀՕՄ-ի Մոնթրեալի «ՍՕՍԷ» Մասնաճիւղին, որ այս տարի եւս շնորհաւորեց մեր Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը եւ մեր աշակերտներուն որպէս կադանդչէք նուիրեց 500 տոլար:

ՅՈՒՆՈՒԱՐ 8-ին Կիրակնօրեայ դպրոցը ունեցավ Ս. Ծննդեան իր յայտագիրը: Կադանդ պապան ներկայ էր եւ նուէրներ բերաւ բոլոր աշակերտներուն:

15-ին լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան Յիսուսի անուանակոչութեան եւ Յովհաննոս Կարապետի տօնին: Դասարանային պահերը ընթացան ըստ դասագրքերու, ու նախակրթարանի դասարանները ունեցան

երաժշտութեան պահ: **22**-ին լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան Վահան Գողթնացիին: Դասարանային պահերը ընթացան ըստ դասագրքերու:

29-ին լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան Առաջաւորաց Պահոց Բարեկենդանին: Դասարանային պահերը ընթացան ըստ դասագրքերու: Նախակրթարանի դասարանները սկսան Ս. Վարդանանց երգեր սորվիլ:





Հայաստանեայց Եկեղեցւոյ

Սուրբ Յակոբ

Կիրակնօրեայ Դպրոց

Հիմնեալ 1980, Մոնթրէալ

www.sourphagop.org

<https://www.facebook.com/sourphagop.org>



Հայր Մեր (յոտնկայս)

Մաղթանք (յոտնկայս)

Մաղթերդ Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ

Դպրոցներու (յոտնկայս)

Տնօրէնի խօսք

Աշակերտութիւն

Աշակերտութիւն

Աշակերտութիւն

Թորոնթոյ Պատկերասրահ

Կենդանի Պատկեր «Սուրբ Ծնունդ»

Նախ. Գ. և Դ.

Ընթերցողներ

Մանկապարտեզի աշակերտներ

Երկրորդականի աշակերտներ

Զատեն Զուլճեան, Միւր Ստեփանեան

Կազմակերպչական Գալուստ

«Հայր Մեր»

Մանկապարտեզ

Ով մեծ Աստուած

Նախակրթարան Ա. և Բ.

Շարականներ և երգեր

Այսօր Տօն է Սուրբ Ծնունդեան

Որք Զարդարեցին

Գիշերն Իջաւ

Սուրբ Աստուած

Այբուբեն

Երգչախումբ

Նախ. Գ. Դ. և Զ և Երկրորդական

Նախ. Գ. Դ. և Զ և Երկրորդական

Նախ. Գ. Դ. և Զ և Երկրորդական

Աշակերտութիւն

Աշակերտութիւն

«Եւ Բանը մարդ եղաւ և մեր միջեւ բնակեցաւ, և մենք տեսանք անոր փառքը. փառքը Միածինին, որ Հօրմէն եկաւ շնորհքով և ճշմարտութեամբ լիցուն:»

Աւետարան ըստ Յովհաննէսի 1.14

2023

Շնորհաւոր Ամանոր

և

Սուրբ Ծնունդ

**Քրիստոս Ծնաւ և Յայտնեցաւ
Ձեզի և Մեզի մեծ Աւետիս**







ՓԵՏՐՈՒՄ 5-ին լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան Ս. Սարգիսին, եւ այդ տօնէն 12 օր եկող Ս. Վարդանանցին: Դասարանային պահերը ընթացան ըստ դասագրքերու: Աշակերտները երգի պահերուն սկսան Ս. Վարդանանց երգեր սորվիլ: Նաեւ իւրաքանչիւրը ստացաւ Ս. Սարգիսի անուշեղէնի բաժին մը:

12-ին լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան Ս. Սահակ Պարթեւ հայրապետին, Տեառնընդառաջին, Ս. Ղեւոնդեանց եւ Ս. Վարդանանցին: Դասարանային պահերը ընթացան ըստ դասագրքերու: Աշակերտները երգի պահերուն շարունակեցին Ս. Վարդանանց երգեր սորվիլ: Գալ Կիրակի Կիրակնօրեայ Դպրոցը

պիտի տօնէ Ս. Վարդանանցը եւ Բուն Բարեկենդանը: **19**-ին Կիրակնօրեայ Դպրոցը տօնէ **Վարդանանց եւ Բուն բարեկենդան**: Այս առիթով դասարանային պահերուն աշակերտները անդրադարձան Վարդանանց Խորհուրդին Ինչպէս նաեւ Մեծ Պահքին: Մանկապարտեզի եւ Նախակրթարանի աշակերտները ծպտուեր էին, եւ երկրորդական աշակերտները խաղեր խաղցան: Միասնաբար երգեցինք Վարդանանց Երգեր: Մեծ Պահքի ընթացքին Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտներու ունին իրենց իւրայատուկ պահքը: Իւրաքանչիւր աշակերտ նաեւ ստացաւ Հակոբաճեւ Գանձանակ մը որուն մէջ պէտք է հաւաքէ որոշ գումար մը այս պահքի ընթացքին, որ պիտի նուիրուի բարեգործական

նպատակի մը: Շնորհաւոր Բարեկենդան, Բարով հասնինք Սուրբ Յարութեան: **26**-ին Կիրակնօրեայ Դպրոցը լսարանային բաժնին ընթացքին անդրադարձաւ Մեծ Պահքի առաջին շաբթուան, Ս. Թեոդորոսին եւ Արտաքսման Կիրակիին: Դասարանային պահը ընթացաւ ըստ դասագրքերու: Մանկապարտեզի եւ Նախակրթարանի դասարանները ունեցան նաեւ երաժշտութեան պահ:





ՄԱՐՏ 5-ին Կիրակնօրեայ Դպրոցը լսարանային բաժնին ընթացքին անդրադարձաւ Մեծ Պահքի Բ. շաբթուան, եւ Անառակի Կիրակիին: Դասարանային պահը ընթացաւ ըստ դասագրքերու: Մանկապարտեզի եւ Նախակրթարանի դասարանները ունեցան նաեւ երաժշտութեան պահ: **12**-ին Կիրակնօրեայ Դպրոցը լսարանային բաժնին ընթացքին անդրադարձաւ Մեծ Պահքի Գ. շաբթուան, եւ Դ. Կիրակիին՝ Տնտեսի Կիրակիին, ինչպէս նաեւ Ս. Յովհաննէս երուսաղէմացիի, Ս. Յովհաննէս Օձնեցիի, Ս. Յովհաննէս Որոտնեցիի, եւ Ս. Գրիգոր Տաթեւացիի: Դասարանային պահը ընթացաւ ըստ դասագրքերու: Մանկապարտեզի եւ Նախակրթարանի դասարանները ունեցան նաեւ երաժշտութեան պահ: **19**-ին Կիրակնօրեայ Դպրոցը լսարանային բաժնին ընթացքին անդրադարձաւ Մեծ Պահքի Դ. շաբթուան, եւ Ե. Կիրակիին՝ Դատաւորի Կիրակիին, ինչպէս նաեւ Ս. Բառասուն Մանուկներուն: Դասարանային պահը ընթացաւ ըստ դասագրքերու: Մանկապարտեզի եւ Նախակրթարանի դասարանները ունեցան նաեւ երաժշտութեան պահ: **26**-ին Կիրակնօրեայ Դպրոցը լսարանային բաժնին ընթացքին անդրադարձաւ Մեծ Պահքի Ե. շաբթուան, եւ Զ. Կիրակիին՝ Գալստեան Կիրակիին, ինչպէս նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորչի Մուտն ի Վիրապին: Դասարանային պահը ընթացաւ ըստ դասագրքերու: Աշակերտները շարունակեցին իրենց շաբաթական պահքը:







ԱՊՐԻԼ 16

-ին Կիրակնօրեայ Դպրոցը լսարանային բաժնին ընթացքին անդրադարձաւ Նոր Կիրակիին: Դասարանային պահը ընթացաւ ըստ դասագրքերու: Մանկապարտեզի եւ Նախակրթարանի աշակերտները նաեւ ունեցան երաժշտութեան

պահ: **23**-ին Կիրակնօրեայ Դպրոցը լսարանային բաժնին ընթացքին անդրադարձաւ Կանաչ Կիրակիին ինչպէս նաեւ տնօրէնը, ուսուցչական կազմն ու աշակերտները ոգեկոչեցին Հայոց Ցեղասպանութեան 108-րդ ամեակը Խոստանալով

. Ապրիլ հայադրոշմ կեանք մը

. Վառ պահել հայաստանեայց եկեղեցւոյ տօներն ու ազգային աւանդութիւնները,

. Լսել, մտիկ ընել ու երգել մեր Հայանուազ շարականներն ու երգերը,

. Ամուր կառչած ֆաւլ մեր հայավայել բարի բարքերուն ու սովորութիւններուն

. Կարդալ ու կեանքի վերածել մեր հայագրեալ Աստուածաշունչը

. եւ մանաւանդ ՍԻՐԵԼ Հայր ամբողջ տարուան ընթացքին:

Դասարանային պահը ընթացաւ ըստ դասագրքերու: Նախակրթարանի աշակերտները նաեւ ունեցան երաժշտութեան պահ:

30-ին Կիրակնօրեայ Դպրոցը լսարանային բաժնին ընթացքին անդրադարձաւ Կարմիր Կիրակիին: Դասարանային պահը ընթացաւ ըստ դասագրքերու: Մանկապարտեզի եւ Նախակրթարանի աշակերտները ունեցան երաժշտութեան պահ:





Մայիս 7-ին Կիրակնօրեայ Դպրոցը լսարանային բաժնին ընթացքին անդրադարձաւ Ս. Խաչի Երեւման տօնին: Դասարանային պահը ընթացաւ ըստ դասագրքերու: Մանկապարտեզի, Նախակրթարանի եւ երկրորդականի աշակերտները ունեցան երաժշտութեան պահ: **14**-ին Կիրակնօրեայ Դպրոցը լսարանային բաժնին ընթացքին անդրադարձաւ Մայրերու Օրուան եւ Համբարձումին: Դասարանային եւ երաժշտութեան պահերուն հանդէսի պատրաստութեան փորձերը շարունակուեցան:









ՄԱՇՏՈՑԻ ԱՐԶԱԳԱՆԳ **L. ՏԱՐԻ**

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐԶԱԳԱՆԳ»ի
այս թիւը կը գտնուին նաեւ համացանցին վրայ
<https://www.sourphagop.org/period/vol30special.pdf>

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի 2022-23 տարեշրջանի կազմը

Սարին Խշիշեան
Աննա Մարիա Շամոյեան
Հրակ Պանքեան
Ալեքս Տեմիրճեան
Սդեֆան Տեմիրճեան
Մհեր Պանքեան
Սեւակ Պապիկեան
Շողիկ Թեհինեան
Առէն Պապիկեան
Թամար Գիգիրեան
Յասմիկ Նաճարեան
Շողիկ Նաճարեան
Թորոս Պապիկեան